22 սեպտեմբերի 2016 թվականի N 973 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1510-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին» N 1510-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) կարգի 34-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«34. Աշխատանքների գնահատականները տրվում են յուրաքանչյուր աշխատանքի ավարտից հետո՝ հաշվի առնելով աշխատանքն անմիջական ղեկավարի կողմից ընդունվելու ժամկետները և որակը: Համակարգով յուրաքանչյուր աշխատանքի գնահատականը տրվում է հետևյալ սանդղակին համապատասխան.

Կատարման որակը / Կատարման ժամկետը	Կատարված է առանց թերությունների	Կատարված է ոչ էական թերություններով	Կատարված է էական թերություն-ներով	Կատարված չէ
Սահմանված ժամկետից շուտ	100	89-80	-	-
Սահմանված ժամկետին	95-90	79-75	65-59	0

Սահմանված ժամկետի ոչ էական բացթողումներով	89-80	74-65	58-50	0
Սահմանված ժամկետի էական բացթողումներով	64-59	58-50	49-35	0

Սույն աղյուսակում նշված «Սահմանված ժամկետից շուտ» է համարվում կատարողի համար տվյալ աշխատանքի կատարման համար սահմանված վերջնաժամկետից առնվազն մեկ աշխատանքային օր շուտ կատարումը՝ բացառությամբ այն հանձնարարականների, որոնց կատարման համար սահմանված է մեկ աշխատանքային օր:».

2) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 34.1-ին կետով.

«34.1. Սույն կարգի 34-րդ կետով հաստատված սանդղակում ներկայացված միջակայքի առկայությամբ յուրաքանչյուր վանդակում համակարգը հնարավորություն է ընձեռում աշխատանքը գնահատողին ընտրելու այդ միջակայքում ներառված թվերից յուրաքանչյուրը:».

3) կարգի 44-րդ կետի վերջին պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

4) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 44.1-ին, 44.2-րդ և 44.3-րդ կետերով.

«44.1. Անմիջական ենթակա ունեցող ղեկավար աշխատողի (այսուհետ՝ ղեկավար աշխատող) դեպքում սույն կարգի 44-րդ կետում նշված բանաձևը կիրառվում է հետևյալ ձևով. ՂԿԸԳ=ՄԳX50% + ԿՀԳX50% X գործակից:

Ղեկավար աշխատողի կառավարչական հմտությունների վերջնական գնահատականը որոշելու համար անհրաժեշտ է պարզել նրա ենթակա աշխատողների (այդ թվում՝ ենթակա բոլոր ստորաբաժանումների աշխատողների) կատարողականների ընդհանուր գնահատականների (ԿԸԳ) թվաբանական միջինը (ԹՄ) և դրա ստանդարտ շեղումը (Standard Deviation), այսուհետ՝ ՍՏՇ, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ՍՏՇ=√ [(∑(ԿԸԳi-ԹՄ)^2)/n], որտեղ n-ը ղեկավար աշխատողների (այդ թվում՝ ենթակա բոլոր ստորաբաժանումների աշխատողների) թվաքանակն է, իսկ ԿԸԳi-ն՝ ենթակա աշխատողներից յուրաքանչյուրի կատարողական ընդհանուր գնահատականը, իսկ i=1,2,.....n:

44.2. Ղեկավար աշխատողի կառավարչական հմտությունների վերջնական գնահատականը (ԿՀՎԳ) որոշելու համար նրա ԿՀԳ-ի նկատմամբ կիրառվում են հետևյալ գործակիցները.

ԹՄ ՍՏՇ	≥ 91	90-81	80-71	70-61	<60
≥ 5.25	0.7	1	0.9	0.8	0
5-5.24	0.5	0.95	0.8	0.7	0
4.75-4.9	0.1	0.8	0.7	0.6	0
<4.75	0	0.7	0.6	0.5	0

Ընդ որում, սույն աղյուսակում նշված միավորի հաշվարկման համար ԹՄ-ն կլորացվում է ամբողջական թվերի:

44.3. Աշխատողի կատարողականի ընդհանուր գնահատականը ներկայացվում է «Ընդհանուր գնահատական» թերթիկով՝ համաձայն N 6 ձևի, իսկ ղեկավար աշխատողինը՝ N 6.1 ձևի: Եթե աշխատողի կատարողականի կիսամյակային գնահատականը «Ընդհանուր գնահատական» թերթիկով անմիջական ղեկավարի նշագրով 60 տոկոս և բարձր է, ապա դա համարվում է անմիջական ղեկավարի դրական եզրակացություն, իսկ եթե 60 տոկոսից ցածր է, ապա համարվում է անմիջական ղեկավարի բացասական եզրակացություն:».

5) կարգի 48-րդ կետը «համաձայն N 6» բառերից հետո լրացնել «կամ N 6.1» բառերով.

6) կարգի 54-րդ և 57.1-ին կետերում «75» թիվը փոխարինել «60» թվով.

7) կարգը լրացնել նոր՝ N 6.1 ձևով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ. սեպտեմբերի 24
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
սեպտեմբերի 22-ի N 973 - Ն որոշման

« Ձև N 6.1

Ղեկավար աշխատողի ընդհանուր գնահատականը

Գնահատվողի տվյալները	
Ստորաբաժանումը	.....
Պաշտոնը (ծածկագիրը)	
Անունը, հայրանունը, ազգանունը	.....

1. Աշխատանքային ծրագրի կիսամյակային կշռված գնահատականի 50%	
2. Կառավարչական հմտությունների կիսամյակային գնահատականի 50%	
3. Ղեկավար աշխատողի կառավարչական հմտությունների գնահատականի նկատմամբ կիրառվող գործակիցը	
4. Ղեկավար աշխատողի կառավարչական հմտությունների վերջնական գնահատականը (4 = 2 x 3)	
5. Ընդհանուր գնահատականը (5 = 1+4)	

Անմիջական ղեկավարի (գնահատողի)
ստորագրությունը _____

Ղեկավար աշխատողի (գնահատվողի)
ստորագրությունը
(ծանոթացա գնահատականին) _____

_____ _____ թ.»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ